ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

ի պատասխան Ձեր 28.06.2024թ. հ.171-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

«Մանկական երկաթուղի» զբոսայգու տարածքը 2014 թվականի դեկտեմբերի 18-ի հ.30/6-ՊՖ պայմանագրով Երևանի քաղաքապետարանը վարձակալությամբ տրամադրել է «Մանկական երկաթուղի» ՍՊԸ-ին: Պայմանագրի ժամկետը լրանում է 2025 թվականի հունիսի 15-ին: Համաձայն այդ պայմանագրի՝ հողամասի վարձակալը պարտավոր է տարածքը բացառապես որպես մանկական զբոսայգի շահագործել, կանաչ տնկարկները պահպանել և ավելացնել, հողամասը բարեկարգել և պահպանել, ապահովել զբոսայգում առկա շենքերի, շինությունների, տրանսպորտային և տեխնիկական միջոցների պահպանումը, վերանորոգումը և տեխնիկական պատշաճ վիճակը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ